

բողջութիւնը, որը ստացւում է մասնակի ձայների համագումարից:

Բայց և այնպէս ամենափորձուած երաժշտական ականջ ունենալիս անգամ բաւական է, որ ուշադրութիւնը կեդրոնացնենք որ և է նօտայի կամ դորժիքի ձայնի վրայ և իսկոյն մնացած բոլոր ձայներն անյայտանում են մեր գիտակցութիւնից:

(Շարունակելի).



2. ԴԻՐՔ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Շարունակութիւն *)

Պլատոնի երկասիրութիւններէից մեզ համար կարեոր է այստեղ միայն մէկը, առաջին մեզ հասած կոմմունիզմի իմաստասիրական համակարգուած պաշտպանութիւն—«politeia», զիւրք պետութեան մասին, որ հաւանականօրէն 368 թուին է երեւան եկել, Պլատոնի դէպի Դիոնեսիոս Կրտսերի պալատը կատարած առաջին ճանապարհորդութիւնից քիչ առաջ:

Այդ գրքի բովանդակութեան էական մասը կազմում է այն հարցի քննութիւնը, թէ ո՞րն է արդեօք պետութեան և համայնքի ամենալաւ կազմութիւնը:

Որ պետութեան և համայնքի դոյութիւն ունեցող ձևերը վատ են, ըստ Պլատոնի ոչ մի կասկած չկար:

Մասնաւոր սեպհականութիւնը, ասում է նա, հարուստների և աղքատների հակադրութիւնը պետութիւնների անկում է բերում: Արդեօք բարեգործութիւնը և հարստութիւնը այնպէս չեն յարաբերում միմեանց, որ եթէ նոքա դրուէին կշեռքի թաթերում, այն ժամանակ նրանցից մէկը կ'ցածանար այնքան, ինչքան միւսը բարձրանար... Հետեւեալը եթէ որ և է պետութեան մէջ շատ են յարգում հարստութիւնը և հարուստներին, ապա աւելի քիչ են յարգում բարեգործութիւնը և բարեգործներին... Այդպիսի պետութիւնը ոչ թէ մէկ, այլ երկու պետութիւն է դառնում. նրանցից մէկը կազմում են աղքատները, իսկ միւսը

*) Տես Արարատ է—Ը էջ 685:

հարուստները. նրանք ապրում են կողք կողքի՝ չարիք նիւթելով միմեանց (ἐπιβουλεύοντες) ... *): եւ վերջ ի վերջոյ գրանք (տիրապետող հարուստները) կռիւ մղելու հնարաւորութիւն չեն ունենում, որովհետեւ կամ պէտք է օգտուեն ամբոխով, որից երբ այդ մասսան զինուած է, աւելի են վախենում, քան թշնամուց, — կամ նրանից չ'օգտուելով՝ կռուի են դուրս գալիս չնչին ոյժով, — և բացի դրանից չեն ուզում հարկ տալ, որովհետեւ չափազանց փողասէր են: Իսկ աղքատներին — բանւորներին (пролетариатъ) Պլատոնը նմանեցնում է ծոյլ մեղուների, — մի բաւականի նշանաւոր համեմատութիւն, որ ցոյց է տալիս հին ժամանակուայ և ներկայ բանւորների տարբերութիւնը: Ազատ շքաւորները ըստ մեծի մասին քրջաղգեստ էին (ցնցոտի հագնող — Lumpen - proletariat)․ նրանք ապրում էին պետութեան և ստրուկների շահագործութեամբ և այն հարուստների արդիւնքից, որոնք իրանց եկամուտները ստանում էին ստրուկների աշխատանքից և ստորադրեալներին կողոպտելուց: Բայց, շարունակում է Պլատոնը, երկուտանի ծոյլերը փեթակի ծոյլերից տարբեր են: Նրանց մէջ բոլորը խայթոցից զուրկ չեն: «Որովհետեւ խայթոց չունեցող մեղուները ամբողջ կեանքում աղքատ են, իսկ խայթոց ունեցողները մեծ մասամբ դուրս են գալիս խաբեբաներ, գողեր և գրքանահատներ, մինչև անգամ տաճար կողոպտողներ և այլ նման խայտառակութիւնների վարպետներ (Գլքբ Ը. գլ. 6—7):

Այն պետութիւնը, որի մէջ միեւնոյն շարքում ապրում են իրար հակառակ երկու այդպիսի պետութիւններ, դատապարտուած է կորստեան, — միեւնոյն է, նրա մէջ կառավարողները հարուստներ լինին (ολιγαρχία), թէ աղքատներ (δεμοκρατία):

Սակայն Պլատոնը այդ «վատ կազմակերպութիւնների» փոխարէն ինչպիսի՞ պետական կազմակերպութիւն է առաջարկում: Նա ասում է այդ հակառակութիւնը կարող է ոչնչացնել միմիայն կոմմունիզմը:

Բայց նա տյնքան ագնուական էր, որ դժուար թէ ցանկանար դասակարգային խտրութիւնների վերացում: Կոմմունիզմը կարելի է դարձնել պահպանողական տարրերին ապահովող կոմմունիզմ, միայն թէ տիրող դասակարգի կոմմունայով: Երբ որ, ասում է նա, տիրող դասակարգերի մէջ ոչնչանայ մասնա-

*) Երկու աղգերի մասին խօսածը, ինչպէս ընթերցողը տեսնում է, Գեղարայէլի (19-րդ դարու պահպանողական անդլիացի պետական գործիչ) հնարածը չի. երկու հազար տարուց աւելի է, որ դա գոյութիւն ունի,

և որ սեպհականութիւնը, այն ժամանակ կ'վերանայ նոցա մէջ դասակարգերին կեդրերէլու և շահագործելու դայթակղութիւնը: Այն ժամանակ տիրապետողները կ'դառնան ոչ թէ դայլեր, այլ հսկող շներ, որոնք մի միայն մի դործ կունենան—պաշտպանել ժողովրդին և առաջնորդել նրան դէպի բարեք:

Աշխատող դասակարգերի, գիւղացիների և արհեստավորների, այնպէս և մանր ու խոշոր առևտրականների համար մասնաւոր սեպհականութիւնը մ'նում է Պլատոնի պետութեան մէջ: Եւ, յիշուի, մասնաւոր սեպհականութեան ունչացումը նոցա համար հակասում էր այն ժամանակուայ արտադրութեան ձևի պահանջներին, որովհետեւ դրա հիմքն էր կազմում հողագործութեան և արհեստների մանր արտադրութիւնը, որը ինչպէս ասացինք, պահանջում է արտահանութեան միջոցներով մասնաւոր սեպհականութիւն: Ի հարկէ, այն ժամանակ էլ կային խոշոր անտեսութիւններ, բայց նրանք ստրուկների աշխատանքով էին պահպանուում: Հողագործութեան և արգիւնագործութեան արհեստը այն ժամանակ դեռ այնքան զարգացած չէր, որ համայնական արգիւնաբերութիւն պահանջէր: Որտեղ բանւորներին համախմբող արտաքին հարկադրութիւն չի եղել, այնտեղ նրանք ազատ մարդիկ են եղել, այնտեղ, նրանցից ամեն մէկը իւր համար է աշխատել: Ցանկանալ վերացնել արգիւնագործութեան միջոցներով մասնաւոր սեպհականութիւնը—Պլատոնի ժամանակ անմտութիւն կ'լինէր: Այդ պատճառով նրա ընկերավարութիւնը էապէս տարբեր էր ներկայից:

Տիրապետող դասակարգը Պլատոնի պետութեան մէջ արտահանութեամբ չէ զբաղուում: Նա ապրում է բանւոր դասակարգերի վճարով: Նրա գոյքի հաւասարութիւնը ոչ թէ արտահանութեան միջոցների հաւասարութիւն էր, այլ զուարճութեան միջոցների—այդ բառի ընդարձակ իմաստով. սպառողութեան կոմմունիզմ:

Տիրապետող դասակարգը պետութեան պահապանն է: Նրա անդամները առանձին հոգատարութեամբ ընտրուած են ամենալաւ և ամենաբարեգործ մարդկանցից: Այդ պահապանների որդիքը, ի հարկէ, աւելի յաւակնութիւն ունին այդ դասակարգի մէջ մտնելու, քան ուրիշներինը, ուստի և խնձորը շատ հեռու չի ընկնում խնձորենուց: Բայց եթէ այդ պահապանների սերնդից մէկը իւր դիրքին անարժան է գտնուում, այն ժամանակ նրան պէտք է առանց արտոսալու այդ գաղափարից դուրս ձգել. և ընդհակառակն՝ եթէ արհեստավորների և հողագործների մէջ կայ այդ տեսակ մէկը, որի մէջ երևան

են դալիս աղնիւ յատկութիւններ, այն ժամանակ նրան կարելի է պատուով պահել և տիրապետողների մէջ ընդունել»:

Այդպիսով պլատոնական տէրութեան մէջ աղնուականութիւնը չէր հիմնուում ժառանգականութեան վրայ:

Պահապանների դասի համար նշանակուած մատաղ սերունդը ստանում է լաւ կրթութիւն, որ Պլատոնը մանրամասն նկարագրում է, բայց դրա վրայ չարժէ այստեղ կանդ առնել:

«Բացի այդ դասաւարակութիւնից, ասում է այնուհետեւ Պլատոնը, ի հարկէ աւելի խելօք մարդը կասէր, որ նոցա ընակարանները, ինչպէս և ամբողջ դոյքը այնպէս պէտք է կարգաւորուած լինեն, որ ոչ արգելք լինեն նոցա լաւ լինելուն, ոչ էլ դրդեն սխրագործութիւններ անելու քաղաքացիների վրայ:

«Բոլորովին ճիշտ է», առաց նա (Գլավիոնը):

«Այդպէս դատ», ասացի ես (Սոկրատ).—«Այդպէս լինելու համար արդեօք չպիտի հետեւեալ ձևով ապրեն: Ամենից առաջ նրանցից ոչ ոք սեպհական ոչինչ չ'պիտի ունենայ,—ոչ առանձին ընակարան, ոչ մթերանոց, որ կամեցողին մատչելի լինէր: Բայց ամեն անհրաժեշտ բան, որի կարիքը կ'զգայ թէ քաջ և թէ սովորական զինուորը, պէտք է ստանան նրանք հերթով միւս քաղաքացիներից, իբրեւ կատարած պահնորդութեան վարձատրութիւն,—այնքան ստանան, որ ոչ մի բանի կարիք չունենան, և որ հետեւեալ ասորուայ համար ոչինչ չ'մնայ իրանց ստացածից: Նրանք պէտք է միասին ապրեն, և, ինչպէս արշաւելիս, ճաշ ընդունեն (սիսիտիա): Ոսկին ու արծաթն էլ, պէտք է ասել, նրանք կրում են իրանց հոգում, իբրեւ ատուածների պարգև, դրա համար մարդկանց ոսկուն և արծաթին չեն կարօտում: Նրանց պէտք է խստիւ արգելել իրանց ատուածային ոսկին սրբապղծելու անցողականով, որովհետեւ այդ հասարակ փողը շատ չարիք է բերել, մինչդեռ նոցա հոգու գանձը մաքուր է: Պետութեան մէջ միայն նրանց պէտք է արգելել գործ ունենալ ոսկու և արծաթի հետ, ձեռք առլ նրան, ընակարանում պահել կամ դրպանը դնել կամ ոսկէ ու արծաթէ ամաններից խմել: Եթէ նոքա ունենային իրանց սեպհական հողն ու ընակարանները, և ոսկին, նրանք կ'դառնային տնտէրեր և գիւղատնտեսներ, և ոչ թէ պահնորդներ, խիստ հրամայողներ և ոչ թէ մ'նացած քաղաքացիների ընկերներ, այն ժամանակ նրանք կ'ապրէին ատելութեան և անվստահութեան մէջ, ներքին թշնամուց աւելի շատ վախենալով, քան արտաքին, և ինչպէս իրանք, այնպէս էլ ամբողջ քաղաքը (պետութիւնը) կ'կործանուէին (Գիրք Գ. գլ. 22):

Բայց Պլատոնը իւր պահանջները համար ոչ միայն դոյքի ընդհանրութիւն է պահանջում, այլ և հեռացնել նրանից այն ամենն, ինչ որ նրանց մէջ կարող է առաջ բերել մասնաւոր շահեր և սերմանել նրանց մէջ կռիւ և երկպառակութիւն: Դրա համար նա պահանջում է մասնաւոր ընտանիքները ոչնչացնել և մտցնել կանանց և որդւոց ընդհանրականութիւն:

Ինչ որ ներկայ ընկերավարակերները հանդէս են բերում իբրև ապացոյց սոցեալ — ռամկավարականների անասնական անկման, — ընտանիքի և ամուսնութեան ոչնչացման պահանջը, այդ կարող են լսել խոր հնութեան այն իիլլիսոփայից, որին այժմ բարոյականութեան պաշտօնական հակողները և... ամենից շատ են փառաբանում նորա համարեա «քրիստոնէական բարոյագիտութեան» համար: «Այս բոլոր նախորդի հետ», ասում է Պլատոնի մէջ Սոկրատը, «իմ կարծիքով կապ ունի նաև հեաւեալ կարգադրութիւնը»:

«Ինչպիսի՞նք»:

«Որպէսզի բոլոր կանայք ընդհանուր լինեն»:

Բայց կանանց ընդհանրականութիւնը, սեռական կոմմունիզմը ոչ մի տրամաբանական կապ չունի արտահանութեան միջոցներով ստեղծած ընդհանուր սեպհականութեան պահանջի հետ, որովհետև այդ դէպքում կնոջն էլ պէտք կլինէր արտահանութեան միջոցների շարքը դասել *):

Սակայն ուրիշ կէտում պլատոնական կոմմունիզմը նման է ներկայ սոցեալ-ռամկավարական պահանջներից մէկին: Սրա նման Պլատոնն էլ պահանջում է մարդկանց և կանանց իրաւունքների հաւասարութիւն, թոյլտուութիւն կանանց բոլոր պաշտօններին մասնակցել (ի հարկէ միայն պահանջների դասակարգում): Կանայք պէտք է մինչև անգամ պատերազմին մասնակցէին: Եւ նոյնպիսի կրթութիւն պիտի ստանան նոքա, ինչպէս և մարդիկ պահանջները խմբից:

«Բոլոր զբաղմունքների մէջ, որոնցով պահուում է պետութիւնը, չկայ այնպիսի մէկը, որ կնոջ պատշաճ չլինէր միայն իբրև կնոջ, և տղամարդուն՝ իբրև տղամարդու»:

Բնական ընդունակութիւններ տրուած են երկուսին էլ

*) Քաղաքացին իւր կնոջը արտահանութեան սովորական զէնք է համարում: Նա լսում է, որ արտահանութեան զէնքերը ընդհանուրի գործածութեան ներքոյ են գտնուում, եւ, ի հարկէ, այդ ուրիշ կերպ չի կարող մտածել, քան այնպէս, որ ընդհանրականութիւնը պէտք է տաքածուի նաեւ կանանց վրայ (կոմմունիզմ, Մանեֆեստ):

հաւասար, և կինն էլ իւր ընտելութեամբ կարող է ամեն տեսակ զբաղմունքների մասնակցել, ինչպէս և մարդը, բայց նա ամեն քանի մէջ մարդուց թոյլ է... Այդպիսով թող մեր պահանջները կանայք մասնակցութիւն ունենան պատերազմի և պետութիւն կառավարելու մէջ և թող ուրիշ ոչինչ չանեն: Բայց այդ բոլոր զբաղմունքների մէջ կանանց պէտք է տալ աւելի թեթեւ մասը, քան տղամարդկանց, որովհետեւ կանայք աւելի թոյլ են (գիրք Ե. գլ. 5 և 6):

Կնոջ հասարակական և քաղաքական իրաւունքների հաւասարութեան հիմքը կազմում է տնային տնտեսութեան վերաբերեալ զբաղմունքներից նրան ազատելն: Պլատոնական պետութեան մէջ դա իրագործուում է այնպէս, որ տնտեսական գործերը ընկնում են աշխատող դասակարգի վրայ: Քանի որ առ նուազն, տնտեսական գործերը չէր կարելի մեքենաներով կատարել, կանանց հաւասարութեան խնդիրը ուրիշ կերպ անիրագործելի էր:

Պլատոնի այդ գաղափարներն ինչքան էլ համարձակ լինին, այնուամենայնիւ նրանք ցնորքներ չեն, այլ ծագում են իրական հիմունքներից: Մենք այդ տեսել ենք նրա ամենահամարձակ գաղափարներից մէկի, ամուսնութեան մէջ հաւասարաչափ ընտրութիւն մտցնելու վերաբերմամբ: Նրան ղեկավարող օրինակը նրա գաղափարների ամբողջ ընթացքի վրայ էր ազդում: Այդ օրինակը Սպարդան էր, ինչպէս արդէն յիշել ենք, Յունաստանի ամենաազնուապետական իշխանութիւնը, որ դրա համար էլ օգտուում կը Աթէնքի ազնուականութեան առանձնայատուկ համակրանքով: Այդ համակրանքը այնքան զօրեղ էր, որ Աթենացւոց պարտութեան նպաստեց պելեպոնեսեան պատերազմի ժամանակ *):

Այն համակրանքը, որ ունէր Պլատոնը իբրեւ ազնուական, դէպի Սպարտան, թուում է, թէ չփոքրացաւ Սոկրատի հին ռամկավարական մտքերի ազդեցութիւնից:

Սոկրատէսի աշակերտների մէջ ամենաաչքի ընկնողներից և նշանաւորներից շատերը Սպարտացիներ էին: Քսենոֆոնտը, սպարտական թագաւոր Ագեգիլայի սրտակից ընկերը, սպարտական զօրքերում շատ արշաւանքների մասնակցեց: Խորոնէյի ճատամարտում նա շտատանուեց կռուելու սպարտական զօ-

4) Դա արտայայտուեց դաւադրութիւններով, դաւաճանութիւններով եւ մինչեւ անգամ աչքի ընկնող ռամկավարների եւ զօրավարների սպանութեամբ:

րաւարի շրախմբում, մինչև անգամ իւր համաքաղաքացիներին
աթենացիներին դէմ: Հենց դրա համար էլ նա արտորուեց իւր
հարադատ քաղաքից: Ալիկրիատէօը իրան աւելի լու էր պա-
հում պելեպոնեսական պատերազմում: Նա լինելով աթենական
ղորավար, անցաւ սպարտացւոց կողմը, դարձաւ նրանց մօտ,
այսպէս ասած, գլխաւոր բանակի հրամանատար, հաղորդեց
նոցա աթենացւոց բոլոր թոյլ կողմերը, և դրանով պատճառ-
դարձաւ նոցա համար մի շարք խոշոր պարտութիւններին, որոնք
խիւսպէս պատերազմը որոշեցին, թէև երկարատե դարձրին այն:

Եւ երբ աթենացիք յաղթուեցան, բաժին դարձան «երե-
սուն բռնաւարներին», արիստոկրատ անպիտաններին մի խմբի,
որոնց յաղթող սպարտացիք աթենական ժողովրդի շէնքին փա-
թաթեցին՝ իբրև կառավարիչներին: Այդ խումբը, որ հարստա-
նում էր անսանձ տերօրի օգնութեամբ, և վերջնականապէս
աւելեց անկեալ Աթէնքը, իւր գլխաւոր էր ճանաչում կրեաիո-
սին, որ նոյնպէս Սոկրատէսի աշակերտն էր:

Այդ պէտք է ի նկատի ունենանք, եթէ ուզում ենք Սոկ-
րատէսի դատը ուղիղ հասկանալ:

Այդ բոլորը ի նկատի ունենալով՝ այլ ևս չպիտի դարձա-
նանք, որ սպարտական պետութիւնը այն հիմքն էր, որի վրայ
յենուում էր Պլատոնը իւր դադափարական պետութիւնը հիմ-
նելիս: Այդ կարելի է ապացուցանել բազմաթիւ կէտերի վերա-
բերմամբ,—սակայն այստեղ տեղը չի այդ ապացոյցները յառաջ
բերելու:

Սրանով, ի հարկէ, երեք չենք սւգում ասել, որ Պլատոնը
ուղղակի ընդօրինակել է Սպարտական պետութեան կազմը:
Գրա համար նա չափազանց փիլիսոփայ էր և չափազանց լաւ
էր տեսնում այն պոսիտութիւնները, որոնցով Սպարտան ար-
դէն նրա ժամանակ տանջուում էր: Իշխանութիւնը և հարըս-
տութիւնները, որ պելոպոնեսեան պատերազմի ժամանակ և
նրանից յետոյ ձեռք էր բերել Սպարտան, սրան էլ անբարոյա-
կանացիին, ինչպէս որ Աթէնքը անբարոյականացաւ պարսկական
պատերազմի յաղթութիւններով և նրա հետեանքներով: Սկզբ-
նական կոմմունիզմի մնացորդները, որ դեռ պահպանուած էին
Սպարտայում, նոյնքան քիչ կարող էին աղատել նրան իւր այդ
անկումից, ինչքան որ ասպետական մի բերդի բեկորներ կարող
են պաշտպանուել ներկայ ռմբակոծութիւնից: Նրանք դարձան
հասարակ ձեւեր: Գուցէ Պլատոնի ժամանակ նոցա ամենագլխա-
ւոր նշանակութիւնն այն էր, որ առիթ էին տալիս հետադադո-
ղին և մտածողին ցանկալի և կարելի համարել կոմմունական

կարգերը, և դրանց ներկայացրած սկզբունքներից մշակել և ուսման նկատմամբ մի այնպիսի հետևողական ծրագիր, որ կարելի էր նրա ժամանակ—դռնէ մտաւորապէս:

Հասկանալի է, — դռնէ մտաւորապէս: Պլատոնը աշխարհական էր. բայց նրա աշխարհական տրամադրութիւնը արտայայտուում էր միայն դէպի ժողովրդի ոտորին խաւերը տաժած անձուիւրութեամբ. և ոչ թէ իւր դատակարգի անգամները վերաբերմամբ ունեցած վստահութեամբ: Դէպի այս վերջինները նա վերաբերուում էր նոյնպիսի անվստահութեամբ, ինչպէս և դէպի առաջինները: Սպարտացւոց կոպիտ պատերազմասիրութիւնը և նոցա անխնայ կողոպտասիրութիւնը նոյնքան անախորժ էին նրա համար, ինչքան և ժողովրդի ավերակա տիրապետութիւնը:

Դրա համար նա իւր դադափարական պետութեան մէջ բարձր դատակարգը երկու խմբի բաժանեց. ղինւորներ և կառավարիչներ: Միայն վերջինները կարող էին կառավարել, բայց նրանք փիլիսոփայ պէտք է լինէին: Ղինւորական աշխարհականութեան տիրապետութիւնը նոյնքան կորստաբեր էր նրա աչքում, ինչքան և ժողովրդի տիրապետութիւնը, որ նրա ժամանակ մեծ մասամբ բազկացած էր քրջազգեստներից: Միմիայն փիլիսոփայները տէրութիւնը կարող է ապահովել պետութեան խելացի կառավարութիւնը: «Բանի որ իմաստասէրների կաճառը (ἐγγραῖς γρηγορά) տիրապետող չլինի պետութեան մէջ, վերջ չի լինիլ ոչ պետութեան և ոչ էլ համաքաղաքացիների դժբաղդութեան, և չի իրականանալ այն կազմն, որ մենք մտածել ենք» (գիրք 2. գլ. 13. Սկզբ. գր. Ե. գլ. 18):

Բայց պետութեան մէջ փիլիսոփայները ինչպէս հասնեն իշխանութեան:—Ոչ թէ ժողովրդի քաղաքական կեանքին մասնակցելով, այլ այնպիսի ձանապարհով, որ կարողանան իրանց հայեացքների կողմը թեքել միապետներից որևէ մէկին (գիրք 2. գլ. 14 1):

1) Վերոյիշեալ ուսուցչապետ Ռորերտ Պեյլմանը, պլատոնական կոմմունիզմի նորագոյն գիտնականը, մի հիանալի դիւտ է արել. Նա յայտարարում է, որ փիլիսոփայական բացարձակութիւնը (обсаялтизмъ), որ Պլատոնը պահանջում էր, իրականացած է—գերմանական կայսրութեան մէջ: «Արդեօր այդ պահանջը իսկական սոցիալական պետութեան մասին մի մարդարէական յայտնութիւն չէ. որ ամենից առաջ գերմանական պետութիւնն իրագործեց»: Բայց ո՞վքեր են այն պետական իմաստասէրները, որոնք ինչպէս ունեւորների, այնպէս և չքաւորների դատակարգից բարձր են կանոնած, Դրանք են մեր ներկայ պետական և հասարակական աստիճանաւորները, հոգեւորականութիւնը, ուսուցիչները, սպաները և:

Արդէն գիտենք, թէ իւր գաղափարներով միապետին հետաքրքրելու փորձը Պլատոնին ուր հասցրեց:

Նրա վիճակն սւնեցան յետագայ այն բոլոր ցնորաբանները (УТОПИСТЫ), որոնք ձգտում էին պետութեան և համայնքի վերանորոգման և չէին դտնում դրա համար պիտանի փափաքներ հէնց համայնքի մէջ. նրանք իրանց յոյսը պէտք է դնէին քաղաքական կամ նիւթական իշխանաւորի, իմաստակ թագաւորի կամ մելիոնատիւրոջ մեծահոգի կամայականութեան որեւիցէ գործողութեան վրայ:

Պլատոնի ժամանակները նրան յայտնի պետութիւններում արդէն չկար ժողովրդի այնպիսի տարր, որից կարելի լինէր պետութեան վերանորոգութիւն սպասել: Ամեն բան փտած էր և խախտուած, և միապետութեան գաղափարը, որպէս պետութեան վերջին միջոց, մինչև անգամ արդէն ծագել էր հառաքակապետականների գլխում: Քսենոֆոնտը, Պլատոնի աշակերտակիցը մի քաղաքական վէպ գրեց «Կիւբոպեդիոն», որի մէջ փառաբանում է բարեկիրթ թագաւորի տէրութեան մէջ սպասուող բարեկեցութիւնը:

Պլատոնից յետոյ փիլիսոփաները շուտով սկսեցին գալ այն եզրակացութեան, որ միապետութիւնը ոչ թէ նոցա իշխանութիւն է տալու պետութեան մէջ, այլ ազատելու է նոցա պետական գործերի մասին եղած ծանր հոգսերից: Պետութեան քայքայումը ցոլանում էր ընդհանուր գիտակցութեան մէջ:


այլն, Հէնց այդ դիրքը ունեցող եւ այդպէս տրամադրուած հասարակական դասակարգ ստեղծելու մէջ, որ ունի մեր ժամանակակից պետութիւնը եւ չունէր հինը, պլատոնը հանձարեղ տրամադրութեամբ տեսնում էր ամեն տեսակ քաղաքականութեան զխաւոր եւ հիմնական հարցը» (R. pölmann, geschichte des antiken Kommunismus und sozialismus, Ա. էջ 427 եւ շար.). Այն կարծիքը, որ ամբողջ պատմական զարգացումը, միջին դարերից սկսած ուրիշ նպատակ չի ունեցել բան հոգեն ցոլերնեան տոհմի եւ տէրութեան փայլուն փառաւորութեան նախագուշակութիւնը, այդ ըստինքեան ենթադրում է պատմութեան գերմանացի ուսուցչապետը: Բայց խորամուխ լինել մութ անցեալի մէջ եւ Պլատոնին դարձնել պրուսական զինուորական եւ բիւրոկրատիայի արդարացնող, ոչ որ չէր համարձակում ասել այդ մինչեւ պեօլմանը:

Եւ որ գերմանացի գիտնականը կարող է յունական իմաստասիրի զիսին պրուսական սաղալարդ դնել հանդիսաւոր կերպով եւ ծաղր ու ծանակ չդառնալ,—այդ շատ բնորոշ է ներկայ գերմանական պատմական գիտութեան եւ հասարակութեան համար:

Այժմ արդէն ոչ թէ հասարակութիւնն է զբաղեցնում իմաստասէրներին, այլ նոցա իսկական «եղը»: Նրանք արդէն ոչ թէ ամենալաւ պետական կազմակերպութիւնն են որոնում, այլ թէ ինչպէս անհատը կարող է իւր սեպհական ոյժերով երջանկութեան հասնել: Հետզհետէ պատրաստուում է այն մթնոլորտը, որից ծնունում է քրիստոնէական կոմմունիզմը:

(Շարունակելի):

Թարգ. Ի. Ս.



ՏՐԱՊԵՉՈՆԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ԿԵԱՆՔԸ

Գ.

Կորուս

Կորուսը 5—6 կանգուն բարձր՝ հաստ 4 կամ 6 սիւներու վրայ հաստատուած մի շինութիւն է, ուր պիտի պահուի զիւղացու լազուտը. կաղինը, ընկոյզը. պտղեղենը ևն.: Նաև այն բաները որ միներէ վնասուելու երկիւղ կայ:

Գիւղացին կորուսի համար նախապէս պատրաստած ու չորացուցած էր մաւմբգի, խոզկաղնի ծառներէ հաստ ու բարակ գերաններ, մեծ մեծ կոճղներ. 3—4 մատ հաստութեամբ 10—15 կանգուն երկարութեամբ տախտակներ, զորս կամ սղոցով քաշել տուած էր և կամ կացինով տաշելով բարակցուցած: տախտակի ձև տուած էր, պատրաստած էր նաև ծածել կոշուած հիւսուածքը, որ պետեղելու էր կորուսի յատակը — սիւներու գլուխը: Պատրաստած է նաև մարդակ, խարթումայ, դռնցու և այլն:

Այն որ աղքատ է իր կորուսը չորս սեան ծայրը կը հաստատէ, այն որ հարուստ է, վեց սեան.

Տան աջ կամ ձախ կողմը դռներու մէկի հանգէպը 10—15—20 քայլ հեռւորութեան վրայ—15—20 քայլ տարածութեամբ տափարակի վրայ փոսեր կը պեղէ զիւղացին, ապա կորուսի սիւները հաստ գերանները կը պատրաստէ քառակուսի տաշելով, այնպէս որ ներքևի կողմը պիտի լինի հաստ, մի մարդ հաղիւ հաղ